

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՇԱՐԻ ԿՈՐՁԱՆՈՒՄԸ 70 ԹՎԱԿԱՆԻՆ\*)

III. ՀՅԵԱՆԵՐԻ ԱԿԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԵԽԻՄԸ ԳԱԼԱՏՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՆԸ



Կարապետ նպիսկոպոս Գրիմեցի

Հրեաները միշտ այն կարծիքին են եղել, որ Պաղեստինը այն Ավետյաց Երկիրն է, որ Եահվեն նվիրել է իր ընտրյալ ժողովրդին և որ ոչ մի օտար պետություն չախտի իշխան այդ Երկրին, Հրեաներից բացի: Եթե ժամանակ առ ժամանակ Ասորեստանի, Բարելոնի, Եգիպտոսի աշխարհականները գալիս երկրը քանզարում ու ժողովրդին գերի էին տանում, կամ սովոր, ժանտախտը և այլ մասսայական հիփանոդությունները մեծ ավերածություններ էին գործում, ապա, ըստ մարդարեների քացատրության, դա Եահվեն էր պատժում ժողովրդին՝ օրինազանցության և հեթանոս աստվածներ պաշտելու համար:

Այս իսկ պատճառով էլ Հոռմայեցիների ներկայությունը Պաղեստինում և նրանց տիրապետությունը անտանելի էր Հրեա ժողովրդի բոլոր դասակարգերի համար անխրտիք: Նրանք ատելով ատում էին Հոռմայեցիներին և ամեն շանք գործ էին գնում, որպեսզի ազատվեն այդ անթվաաների լծի տակից: Թեև անխատիր կերպով բոլոր Հրեա-

ները պիղծ էին համարում Հոռմայեցիներին ու նրանցից յոթը քայլ հեռու կանգնում, որ շպղծվեն, սակայն ատելության արտահայտության մեծ «օրինապահներն» ու «կարգի» կողմնակիցները այս բանում տարբերվում էին ծալքահեղներից: Փարիսեցիներն ու սակուկեցիները, որպես օրինապահներ, հոռմայեցիների հետ իրենց վարկեցողության մեջ զուապ էին, իսկ հասարակ դասակարգը, որ շահագործվում էր ոչ միայն Հոռմայեցիների, այլև և փարիսեցիների, սադուկեցիների ու քահանաների կողմից, իր նյութական ծանր կացության միակ պատճառը Հոռմայեցիներին համարելով, իր ողջ զայրուցիլ թափում էր վերջիններիս վրա: Շուտ բռնկվող Հրեաները, մանավանդ գալիլացիք, միշտ պատրաստ էին ապստամբության դըրուց բարձրացնել ատելի տիրականների դեմ:

Միայն թագավորական ցեղը՝ Հերովդեսն ու իր հաջորդներն էին, որ Հոռմին բարեկամ մնացին և օգնում էին նրան, և այս իսկ պատճառով էլ ատված էին ժողովրդից:

Հաճախ ամենաշնչին պատճառներից արյունահեղ ընդհարումներ էին ծագում ժո-

\*) Միհքը տես «Եղմիածին» ամսագիր 1949 թ. Հունվար-փետրվար:

ղովրդի և հոռմայեցի զինվորների միջև\*): Մակարն այդ խոռվություններն ու ապստամբությունները շատ թանգ էին նստում հրեա ժողովրդին: Հոռմայեցիները ամենազաժան կերպով ճնշում էին խոռվությունները և ապստամբներին կոռորում կամ գերի վերցնում և շոկաններում որպես ստրովներ վաճառում:

Օգոստոս Օկտավիանոս կայսեր օրով Սադուկը (ըստ Գործք Առաքելոցի Թեսա), նըրանից հետո էլ Հուդա Գալիլիացին, «վրեժիցնիրը Խրայելի»—զիլանների—պարագլուխները, տարբեր ժամանակներում հրեա ժողովրդին ապստամբեցրին Հոռմայեցիների դեմ: Նրանք քարոզում էին, թե «Գալիս է Մեսիան, որը կործանելու է Հոոմը և վերականգնելու է Խրայելի փառքը»:

Դժգոհ տարրերը անմիջապես միանալով ապստամբության դրու բարձրացրին Հոոմի իշխանության դեմ, բայց մեծ կորուստներ կրելով պարտվեցին ու ստիպված եղան նորից ճանաչել Հոոմի գերիշխանությունը: Խակ Մադուկը և Հուդա Գալիլիացին իրենց կյանքը գործաբերեցին հրեաների ազատագրության դրոժին: Ամենից շատ ապստամբում և Հոռմայեցիներին դիմադրում էր Գալիլիան—Պաղստինի հյուախսային մասը:

Հրեա ժողովրդը, տարված Մեսիայի գալստյան գաղափարով, անհամբեր նրա գալստյան էր սպասում՝ կրկնելով. «Մեսիան կա անհաղթելի զորությամբ, նահվեի օգնությամբ դուրս կանի Հոռմայեցիներին մեր երկրից, նահվեի պարզեած Ավետյաց երկրից»:

Մեսիան եկավ, բայց երուաղեմն ու նրա տաճարի հոգմոր իշխանությունը ճանաչեցին ու ընդունեցին նրան, որովհետև իրենց ակնկալած Մեսիան չէր: Նա եկել էր ո՛չ թե հրեական մարմնավոր իշխանությունը վերականգնելու, այլ խաղաղության, մարդասիրության գաղափարները քարոզելու համար: Նրա աշակերտները հասարակ ձկնորսներ ու մաքսավորներ էին և ոչ թե փայլուն նիզակներով ու վահաններով ապառազինված զինվորներ:

Այդ ժամանակները Գալիլիայում հաճախ էին լավում գուշակողների ու մարդարեների քարտողները.

\* ) Մի խումբ գալիլիացիր երուաղեմում զահ ժառուցանելիս ընդհարվում են տեղացի հրեաների ու բանաների հետ, որի հետևանքով խռովություն է ծագում: Պիտառոս զորք ուղարկում կարգը վերականգնելու Գալիլիացիք ընդդիմանում են և Հոռմայեցիները մեծ թվով գալիլիացիների կոտորում են: Այսպես «նրանց արյունը խառնվեց զոհերի արյան հետո:

(Ղոկ. ԺԴ, 1)

— Հասել է վերջին դատաստանը: Աշխարհը լցվել է մեղավորներով և անաստվածներով: Նրանք խոռում են բարի աղքատների վաստակը, որպես թե խղճում են նրանց: Ահա լսվում է որոտման ձայնը: Մոտ է անարդար իշխանավորների, հզոր, ֆարուսա և անվանի մարդկանց կործանման ժամը...

— Վայ ձեզ հզորներ, արդարներին ըրունովթյամբ վնասողներ, զգուշացեք, քանզի մոտ է ձեր դատաստանի օրը:

— Վայ ձեզ հարուստներ, որ հուս եք կրել ձեր հարստության վրա, բայց դուք դրանցից պիտի զրկվիք:

66 թվին (Ք. Հ.) Գալիլիայում անսպասելի կերպով երևում է գլխատված Հուդա Գալիլիացու որդին՝ նոխումը, որը իր հոր մահապատճից հետո անհետացել էր: Նա քարու-

դում էր:

— Ո՞վ իսրայելացիներ, ի՞նչ բանի եք սպասում: Անթիվատները պղծում են մեր երկիրը: Նրանց զինվորները իրենց պիղծ ոտներով լրբարար կոնսուում են մեր տաճարի հատակը: Դո՞ւք, ո՞վ իսրայելացիներ, կոշված եք ծառայելու միայն ծահմկեին: Դուք չպիտք է խոնարհվեք խողի միս ուստող կեսարի առաջ: Մտաբերեցեք ձեր մեծ հայրենասեր, նախանձախնդիր և պաշտպան Հուդա Մակաբայեցում և Փինհաս թեն էլիային: Միթե դուք թուլլ կտաք օտարներին հափշտակելու նահմկեի խոստացած երկիրը: Ականց մի՞ դնեք «օրենքի և կարգի» պաշտպաններին, որոնք իրենց գումար խոնարհել են հեթանոսների առաջ: Մեսիան ծնվել է, նա սպասում է, որ դուք գլուխ բարձրացնեք և նա կա ձեզ օգնության: Կոտորեցեք երուսալեմի Գերագույն Հոգովորի հորդրով վախկուուներին, ոչնչացրեք Հոռմայեցիներին:

Փողովուրդը այս քարոզներից հուզվում և ավելի մեծ ատելությամբ էր լցվում դեպի Հոռմայեցիները: Մինուրութը էլեկտրականացած էր, բորբոքված սրտերը լցված ազատության տենչով: Եվ միայն մի առիթ էր պետք ապստամբության բռնկման համար:

Ու առիթը ներկայացավ:

#### IV. ՆՈՐ ԱՊՍԱՄԲՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱԼԻՒՍ- ՅՈՒՄ ԵՎ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ ԼԵԳԱՏ ՑԵՍՏԻՈՒՄ ԱՐԵԱՎԱԾԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Երուսաղեմի պրոկուրատոր Հեստիոս Ֆլոր Պաղեստինի բնակիչների համար 66 թվին (Ք. Հ.) Հոոմից ընտրական նոր օրենք ստացավ: Այս նոր օրենքով վերացվում էր հրեաների արտոնությունները և իրավահավասարություն էր մացվում հրեաների ու հեթանոսների միջև: Օգտվելով այս, ըստ երկույթին, անվնաս օրենքից, կեսարիայի հույները

Հրեաներին ծպղութ նպատակով 66 թ. մայիսի 21-ին նրանց ժողովարանի (սինագոփի) մուտքի առաջ, զոհաբերության համար, արևոր մորթեցին: Հրեաները, զայրացած հուզների այս հանդուզն վարմութի դեմ, բողոքեցին քաղաքապետին, սակայն հոռմայեցի քաղաքապետին ծաղրի ենթարկեց հրեաներին ու պաշտպանեց հուզներին: Այս ժամանակի տեղի ունեցավ արյունահեղ ընդհարում, լուրը կայծակի արագությամբ տարածվեց մոտակա քաղաքներում ու գյուղերում: Մայիսի 21-ից մինչև 26-ը, վեց օրվա ընթացքում, նոր կազմված հրեական պարտիզանական ջոկատները Հերազում, Սեբաստիայում, Ասկաղոնում և այլ քաղաքներում շատ հուզն ու հոռմայեցի սպանեցին:

Ի պատասխան դրան, հոռմայեցիներն ու հուզները մասսայական հրեական շարդիք կազմակերպեցին Կեսարիայում, Ասկաղոնում, Գատարում, Ալեքսանդրիայում և այլ քաղաքներում: Միայն Կեսարիայում 20 հազար հրեա սպանվեց:

Կեսարիայի ղեպերը խսկույն արձագանք գտան նաև Երուսաղեմի մեջ: Տաճարի կառավարի, երիտասարդ գիտնական Եղիազար թեն Սիմոնը գլուխ կանգնեց ապստամբական շարժման: Օրենքի և կարգի կողմնակից շափակորների բոլոր շանքերը, խաղաղացնելու բորբոքված մտքերը, իզուր անցան: Ապրատամբները Եղիազար թեն Սիմոնի առաջնորդությամբ գրավեցին քաղաքի ամրությունները և հարձակվեցին հոռմեական կայազորի վրա, որը ամրացել էր Մակարայեցիների պալատում: Փոքրաթիվ կայազորը հուահատ ու քաջաբար կովում էր Վլրեժմանդիրք Խորացիլից ջոկատի գերազանց ուժերի դեմ:

Հոռմայեցիների անելանելի դրությունը աեմնելով և որպես թե կզուր արյուն թափել շանկանալով, հրեաները հոռմայեցի զինվորներին առաջարկեցին անձնատուր լինել: Կայազորը համաձայնեց զենքերը հանձնել մի պայմանով— որ իրենց կյանքը խնայի և թույլ տրվի անզեն հեռանալ Երուսաղեմից և անփորձ վերադառնալ Հայրենիք: Երկու կողմերին ներկայացուցիչների միջև գրավոր ու երդմամբ պայմանագիր կնքվեց: Բայց երբ հոռմայեցիները զինաթափ եղան, հրեաները խսկույն հարձակվեցին նրանց վրա ու կոտորեցին անզեն մարդկանց: Մեռնող հոռմայեցիները շարունակ աղաղակում էին. «պայմանագիր», «երգո՞ւմ», գազազած հրեաներին հիշեցնել ուղելով իրենց հանդեպ ցուց տրված տմարդի վարժունքը:

Ագրիպաս հրեա թագավորը և իր քույրը՝ Երեխնիկան նույնական փորձեցին համոզել Երուսաղեմացիներին, որ ապստամբական

շարժումը միայն վնաս կարող է բերել. Հրեա ժողովրդին, քանի որ Հռոմը, գերազանց ուժեր ունենալով, վերջիվերցո պարտության պիտի մատնի ըմբուտներին և այսպիսով ապստամբությունը պատճառ պիտի դառնա նոր ու ապարդյուն արյունահեղության: Սակայն կատաղած ամրության հարձակվեց Ագրիպասի պալատի վրա և գրավեց այն: Իսկ Ագրիպասը և իր քույրը թերենիկան ստիպված էին փախչել Երուսաղեմից:

Ապստամբությունը ծավալվել սկսեց. շարունակ նորանոր գավառներ էին միանում ապստամբներին: Հինգ ամսվա ընթացքում ապստամբությունը տարածվեց Հրեաստանում, Իոնամիայում, Գալիլիայում և Պիրեայում: Հրեաների օրինակին հետևեցին Հռոմի մյուս թշնամիները— արաբները և նաբաթները: Հրեական պարտիզանական ջոկատների գլուխ անցան Գալիլիայում՝ Հովհաննես Գիշալացին, Սամարիայում՝ Սիմոն Բար Զիորան և Երուսաղեմում՝ Եղիշար Թին:

Պաղեստինի կուսակալ Հեստիուս Յլորը, ձեռքի տակ բավականաշափ զինվորական ուժերը չունենալով, դիմեց Սիրիայի լեգատ Յեստիուս Գալլոսին, որը մի խոշոր լեգեոնի գլուխ անցան արշավեց Պաղեստինի վրա: Նրան միացավ Ագրիպաս և իր երկու հազար ծիփուր գործուք:

Յեստիուս Գալլոսը սկզբում մեծ հաջողությամբ առաջ էր շարժվում, մեկը մյուսի հետեւից գրավելով Հրեաստանի քաղաքներն ու ամրոցները: Հոկտեմբեր ամսին նա արդեն գտնվում էր Գաբալին քաղաքում, Երուսաղեմից 10 կիլոմետր հեռավորության վրա: Թղվում էր, թե ինչպիսի արագությամբ ծավալվեց ապստամբությունը, նույնպիսի հեշտությամբ էլ պիտի ճնշվեր այն՝ Երուսաղեմի դրավմագր: Սակայն, պարտիզանական միացյալ ջոկատները այստեղ, Գարավոնի մոտ, հանկարծակի հարձակումով մեծ կոտորած արին և Յեստիուս Գալլոսին ստիպեցին նահանջել:

Հոռմեական բանակը Պաղեստինից նահանջելով մտավ Հրեաստանի հյուսիսում գտնվող Բեթ-Խորոնի կիրճը: Այստեղ Սիմոն Բար Զիորայի պարտիզանական ջոկատը դարան մտած հենց Յեստիուս Գալլոսին էր սպասում: Երբ հոռմեական բանակը արդեն կիրճում էր, Սիմոն Բար Զիորան հարձակվեց կիրճի երկու անցքերից ու սկսեց սոսկալի շարդը: Մեծ խոժապ ստեղծվեց հոռմայեցիների միջև և այդ սոսկալի շարդից շատ փել զինվորներ ազատվել կարողացան: Յեստիուս Գալլոսը իր բանակի մնացորդներով հաղիվ Սիրիա հասնել կարողացավ:

Թեթ-Խորոն կիրճում<sup>\*</sup>) սպանվեց պրոկուրատոր Հեստիոս Ֆլորը:

Այս դեպքերը տեղի ունեցան 66 թվի (Ք. Հ.) մայիս ամսից մինչև նոյեմբեր ամսվասկիզբը:

Ցեստիոս Գալլոսի պարտությամբ ապօստամբները տեր գարձան Պաղեստինին և սկսեցին երկիրը կառավարել իրենց օրենքների համաձայն:

Նոքա երկիր պաշտպանության ամրապնդան համար Երոսաղեմում կազմեցին Ռազմական հորհուրդ, զոկատները լրացրին նոր համալրումներով և սկսեցին նախապատրաստվելու որպեսզի պատրաստ դիմավորին հոռմայեցիների սպանվող հարձակմանը:

## V ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Ապստամբության հետևանքով երկրի ներսում քաղաքական նոր իրադրություն ստեղծվեց. Պաղեստինում կազմակերպվեց նոր կառավարություն—Երկրի Պաշտպանության Խորհուրդը:

Գերազույն Հոգևոր Խորհրդի նախագահ Անանը և սինհոգոսականները, կարգի ու խաղողության այս կողմնակիցները, նոր պայմաններում ստիպված էին իրենց զոպապ պահել: Նրանք ժողովրդական այդ շարժումը համարում էին հանդուգն և նույնիսկ խելագար քայլ ու համոզված էին, որ նա ողբերգական վախճան պիտի ունենաւ: Եվ միայն տաճարի կառավարի ու եռանդուն գիտնական Եղիազար Բեն Սիմոնն էր, որ, Պաղեստինի պատագորության գաղափարով տարված, զեկավարում էր երուսաղեմացիների ապստամբությունը, հանդիսանալով «վրեժինդիրք Խորայիլ» կուակացության պարագուիսներից մեկը: Նոր կազմակերպված ջոկատի գլուխ անցած նա գրավեց քաղաքի ամրոցը, անափիկ աշտարակները և ամրացրեց պարիսպներն ու պահականմերը դրեց Ապրիապասի ու Մակարայեցիների պալատներում:

Իսկ Գալիլիայում այդ ժամանակները գործում էր Հովհաննես Գիշալացին (Հովհաննես Բեն Ղակ), որի պարտիզանական զոկատը օրեցօր աճում էր ի հաշիվ «վրեժինդիրք Խորայիլ» և «մակաբայեցիք» կուակացություններին համակրողների: Գիշալացին,

<sup>\*</sup>) Այս Բեթ-Խորոն կիրճում Հետու նավիալի որդին (Մովսեսի հաջորդը) սաստիկ շարդ տվեց ամազեկացիներին:

Այս կիրճում էր գարձալ, որ Հուդա Մակարեն պարտության մատնեց Անտիոքոս Սելեկիացուն և աղատաբերեց Պաղեստինը Ասորիքի գերիշխանությունից:

Եահվեի այս մոլեռանդ հավատացյալը, համոզված էր, որ Եահվեն իրեն է ընտրել Հըրեաստանը պիղծ անթլիքատների իշխանությունից ազատելու համար:

Պարտիզանական երրորդ խոշոր ջոկատը գործում էր Սամարիայում՝ Սիմոն Բար Զիուր (Սիմոն որդի Գեորգ) մակարայեցու Հըրամանատարությամբ: Սա գյուղացիական ծագումով և մեծ ժողովրդականություն վայելող անձնավորություն էր: Իր զաժանությամբ նա սարսափ էր տարածել հույների ու հոռմեացիների մեջ, մանավանդ Բեթ-Խորոն կիրճի կոտորածից հետո:

Ցեստիոս Գալլոսի պարտությունից ու նահանջից հետո ապստամբների պարագուները Երուսաղեմ խորհրդի հավաքվեցին: Այստեղ Եղիազար Բեն Սիմոնը, Հովհաննես Գիշալացին և Սիմոն Բար Զիուրան կազմեցին Պաշտպանության Խորհուրդ, որին մասնակցեցին նաև սաղուկեցիներն ու փարիսեցիները: Պաշտպանության Խորհուրդը պապա գործունելության համար ծրագրի կազմեց Երկիրը Հովհանների նոր հարձակումից պաշտպանելու նպատակով: Ժողովրդական մասսաներին ղեկավարելու համար Խորհուրդը ամենմիջապես՝ գավառներն ուղարկեց իր ներկայացուցիչներին: Գալիլիա ողարկեց կրակոտ քարոզիչ, տաճարի երիտասարդ կիսնական և առաջին կարգի երեց Հովհաննես Բեն Մատաթիասը, որը, իբրև ականատես, այդ անցքերը նկարագրել է Երուսաղեմի ու նրա տաճարի կործանման պատմության մեջ\*):

Երուսաղեմը այդ օրերին զինվորական ճամբարի կերպարանք էր ընդունել: Բոլորը լծվել էին պաշտպանության գործին: Երկաթագործերը զենք էին պատրաստում, Հովհագործները աշտարակներն ու պարիսպները ամրացնում: Պաշտպանության Խորհուրդը, համոզված լինելով որ Հովհաններից հեշտությամբ չեն հաշտվի Պաղեստինի կորըստյան հետ և պիտի աշխատեն ամենայն խրստությամբ ճնշել ապստամբությունը, նորանոր զորամասեր էր կազմակերպում և վարժեցնում նրանց ուսադական գործին: Մինչդեռ ժողովուրդը առաջին հաջողությունից հետո այն կարծիքին էր, թե Ցեստիոս Պալլոսի պարտությունը դա Եահվեի գործն էր և որ առաջիկայում ևս Եահվեն կօգնի իր ընտրյալ ժողովրդին ու կազատագրի անթլիքատների

<sup>\*)</sup> Գիրք պատմութեանց Յովսէփոսի Երրայեցւոյ, արարեալ յաղագս պատերազմի Հըրէց ընդ Հառությացին և աերման Երուսաղեմի, Բարգմ. Վաեկանոսի Էհաւուցու, 1787 թ. էշմակիցին:

իշխանությունից: Եվ քանի որ Եահվեն զորա-  
վիդ է Հանդիսանում, ապա Հաղթանակին ա-  
պահովված է ու պետք է կովել մինչև վերջին  
շուրջը:

## VI ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Եթ Հրեաների ապստամբության և Ցես-  
տիուս Գալլոսի արշավանքի ու պարտության  
պաշտոնական Հաղորդագրությունը Հռոմ Հա-  
սավ, սենատոր մանրամասն զեկուցում ու-  
ղարկեց Ներոն կայսրին, որն այդ ժամանակ  
Հռունաստանի քաղաքներում համերգներ էր  
կազմակերպում և ինքն էլ, որպես երգի, ե-  
րակվեներ ունենում Կորնթոսում:

Սենատի զեկուցագիրն ստանալով Ներոնը  
Հրամայեց ետ կանչել Ցեստիուս Գալլոսին  
և նրա փոխարեն Միրիացի լեգատ նշանակել  
սենատոր Մուցիուսին: Խոկ Հրեաստանում էլ  
կարգն ու խաղաղությունը հաստատելու հա-  
մար նշանակեց 60-ամյա Վեսպասիանոս  
Ֆլավիոսին, որը արդեն մեծ հաջողությամբ  
կորիներ էր մղել Անգլիայում և փորձված  
զորապետի անուն ուներ:

Վեսպասիանոսի տրամադրության տակ  
դրվեց երեք լեգենը (5-րդ, 10-րդ, 15-րդ):  
Ամեն մի լեգենը բաղկացած էր 6 հազար  
ծանր ու թեթև զրահավորված դիմուններից:  
Բացի այդ Վեսպասիանոսի Հրամանատարու-  
թյան հնթարկվեց նաև Ագրիպաս II թագա-  
վարի շրու հազարամոց ձիավոր գունդը: Այս  
բանակի գլուխն անցած Վեսպասիանոսը  
Պաղեստին հասավ 67 թվին, ափ դուրս գա-  
լով Կեսարիայում:

Առաջին քաղաքը, որ ենթարկվեց Վեսպա-  
սիանոսի Հարձակմանը, դա Հռուսապատն էր,  
մի ամրացված քաղաք, որը սաստիկ դիմա-  
դրություն ցուց տվեց: Քաղաքի պաշտպա-  
նությունը ղեկավարում էին Հռովհաննես Գի-  
շալցին և Հռովհեփ Բեն Մատաթիասը: Հռ-  
ուսապատը պաշտպան մեջ մնաց 50 օր և  
միայն շրի պակասության պատճառով ան-  
նատուր եղավ: Հռովհաննես Գիշալցին իր  
գործիքի մեծ մասի հետ կարողացավ դուրս  
դալ քաղաքից և նահանջել, իսկ Հռովհեփը  
գերի ընկալ Վեսպասիանոսի ձեռքը: Հռուս-  
ապատիցիները դեռքին կովողներին անխնա-  
կութեցին, իսկ անդեն քաղաքացիներին  
գերի վերցրին ու վաճառեցին որպես  
ստրուկներ:

Ապա Վեսպասիանոսը Գեննևսարեթ լճի ա-  
փին գրավեց Տիբերիոսը, ուր գտնվում էր  
Ագրիպասի պալատը: Հրեաները, ատելու-  
թյամբ լցված դեպի այս պիղծ Հրեա թագա-  
վորը, արդեն քանդել ու կործանել էին այդ  
գեղեցիկ շենքը:

Վեսպասիանոսը իր արշավանքը շարունա-

կելով գրավեց նաև Գալիլայի ու Սամա-  
րիայի քաղաքները: Այստեղ Հրեաները ար-  
դեն թույլ դիմադրություն էին ցուց տալիս:

Վեսպասիանոսի ցանկությունն էր ձգձգել  
Պաղեստինի վերջնական գրավումը, որպեսզի  
ինքը ավելի երկար մնար Հրամանատարի  
պաշտոնում: Այս իսկ պատճառով էլ նա չըր  
շտապում արշավել Երուսաղեմի վրա ու ա-  
պատամբությունը վերջնականապես ճնշել,  
այլ բարձր համարեց իր հապաղումը ար-  
դարացնող պատճառաբանությամբ Հաղոր-  
դագրություն ուղարկել Հռոմի սենատին:

68 թվի գարնանը Վեսպասիանոսը պատ-  
րաստվում էր վերսկսել արշավանքը Երուսա-  
ղեմի վրա: Սակայն հենց այդ նույն 68 թվի  
սկզբներին Հռումում խոռվություններ տեղի  
ունեցան, որոնց զո՞ր գնաց Ներոն կայսրը:  
Գալլական, գերմանական և խպանական լի-  
գեռունները իրենց հրամանատարներին կայսր  
հոչակեցին, սակայն նրանք սպանվեցին կամ  
գամբընկեց արվեցին հակառակորդների կող-  
մեջ\*):

Վեսպասիանոսի արևելյան բանակը սպա-  
սում էր դեպքերի զարգացմանը և միայն ա-  
ռերես հպատակություն էր հայտնում մեկը  
մյուսին հաջորդող կայսրներին:

Այս սպասողական և խառն դրությունից  
օգտվեցին Հրեաները, Երուսաղեմի պաշտ-  
պանների թիվը համարելու համար կազմվե-  
ցին նորանոր ջոկատներ, իսկ Պաշտպանու-  
թյան նորուրողը դիմեց պարթևներին, նը-  
րանցից օգնություն խնդրելով, որը սակայն  
չստացավ:

Նորից հանդես եկան գուշակողներն ու  
մարգարենները, որոնք Եահվեի անունից քա-  
ռողում էին:

— Մոտ է Հռումի կործանումը, աշխարհի

\* Ներոնի մահից հետո գալլական, խպանական և  
գերմանական լեգենները սենատին ստիպեցին կայսր  
ճանակել ծերուկ զրապետ Գալիլայանուին, որը հազիվ  
մի քանի ամիս դիմացավ կայսերական գանձի վրա:  
Խտական լեգենների մէջոցով նրան գամբընկեց արակ  
ու սպանեց պալատական Օտոնը, մի երիտասարդ ու  
քաջ զորապետ: Սա ևս երկար շմանց գանձի վրա: Հյու-  
սիսային Խտական լեգենների օգնությամբ սրան  
հաջորդեց Վիտելիսուր: Այս իրադարձությունները տե-  
ղի ունեցան 67—69 թվականներին: Միայն Արևելքը  
ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում: Սակայն,  
երբ իրար հաջորդող գամբալների հավատակություն-  
ները և երկրի տնտեսական քայլայումը ծայր ասաի-  
ճանին հասան բոլոր պետական գործիչների հայցաբ-  
ները գարձան դեպի միջազգային եղիպատական և պա-  
զեստինյան լեգենների պետ Վեսպասիանոս Ֆլավիո-  
սը, որը մինչ այդ խորհրդագոր լուսություն էր պահապ-  
նում, իր լեգենները պատրաստ վիճակում պահելով:

վերջը: Նորանոր փորձություններ են գալու աշխարհիս վրա: Երկրաշարժներ, գետերի վարարումներ, արևի և լուսնի խավարումներ են լինելու Պիտի կործանվի համաշխարհային պոռնիկը՝ Հոռմը, իր անթիվ մեղքերի համար: Եաւ վեն կրկին պիտի վերականգնի իր խոստացյալ երկրի և ընտրյալ ժողովրդի երրեմնի փառքը:

Հոռմում ծագած խոռվությունները ձեռնոտուի էին ոչ միայն հրեաներին, այլև և հունահոռմեական լայնածավալ պետության մեջ ապրող բոլոր դժգո՞ն տարրերին: Եվ Հոռմի գերիշխանությունից ազատվելու հուզար կը կին սկսեց առկայժել բոլոր դժգո՞ն տարրերի սրտերում: Թվում էր, թե հոռմեական մեծ պետությունը գտնվում էր քայլայման ու կործանման նախօրյակին: Երկու տարի տևող ազգամիջյան կոփները շատ թուլացրին հոռմեական կայսրությունը և տնտեսական խոշոր վնասներ հասցրին նրան: Բայց կայսրությունը, շնորհիվ հելենական ու ոռմանական հավատարիմ տարրերի կայունության և իրեն ենթակա պղովինցիաների մեծամասնության հավատարմության, այնուամենայնիվ դիմացավ բոլոր կործանարար հարվածներին:

Հոռմին մինչև վերջ հավատարիմ մնացին հրեա թագավոր Ագրիպաս Ա, Եփիպոսուի պրեֆեկտ սենատոր հրեա Տիրերիոս Ալեքսանդրը և Սիրիայի իշխան Սուսանուած ուղարկուած, որոնք մտահոգված էին գահ բարձրացնել այնպիսի մեկին, որը ոչ միայն կարողանար կառավարել երկիրը, այլև և խաղաղացնել հուզված մտքերը: Նոքա կանգ առան արևելյան լեռեռների հրամանատար Վեսպասիանոսի վրա, որը ինքն էլ դեմ չէր կայսր հոչակվելու:

Սիրիական, եպիպոտական ու պաղեստինյան զորքերի հրամանատարները 69 թվին վահանի վրա բարձրացրին Վեսպասիանոսին և կայսր հոչակեցին, հապատակության երդու տալով նրան:

Միաժամանակ Գերագույն Հոգևոր Խորհրդը մի պաշտոնական գրությամբ, որը կրում էր անդամների ստորագրությունները և վավերացված էր Խորհրդի կնիքով, դիմեց Վեսպասիանոսին և հայտնեց: Որ իրենք գենքը վայր են դնում ու ընդունում Հոռմի գերիշխանությունը: Վեսպասիանոսը սույն գրությունը ուղարկեց Հոռմի սենատը, հայտնելով որ Պաղեստինում ապստամբությունը ճնշըված է:

Ինչ վերաբերում էր Վեսպասիանոսին կայսրը հոչակելուն, ապա Հոռմի սենատը ինքն էր, կատարված փաստի առաջ կանգնած լինելով, ստիպված եղավ նրան ճանաշել Հոռմի կայսրը:

Վեսպասիանոսը, վստահ իր լեզեռնների ու հրամանատարների վրա, թողեց Պաղեստինը ու ճանապարհվեց Ալեքսանդրիա, ուր մնաց շատ ամիսներ և ապա Պաղեստինի վերջնական գրավումը իր որդի Տիտոս Ֆլավիոսին թողնելով, ինքը անցավ Հռոմ:

VII ՏԻՏՈՍԻ ԱՐԵԱՎԱՆՔԸ, ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ, ՍՈՎԸ ԵՎ ՏԱՃԱՐԻ ԿՈՐՄԱՆՆՈՒՄԸ

Երբ Տիտոսը ստացավ Վեսպասիանոս կայսեր հրամանը՝ Պաղեստինը խաղաղացնելու մասին, իսկուն Ալեքսանդրիայում սկսեց եռանդուն նախապարաստություններ տեսնել: Նա ստացավ 5-րդ, 10-րդ, 12-րդ ու 15-րդ լեռները և Ագրիպաս Ա-ի 4 հազարանց գունդը, իսկ Եփիպոտի կուսակալ Տիրերիոս Ալեքսանդրը էլ, որպես փորձված զրաքանչությունը դարձավ նրա խորհրդատուն:

70 Թվի գարնանը Տիտոսը արշավեց Պաղեստինի վրա: Նրան ուղեկցում էին 5-րդ, 10-րդ, 12-րդ և 15-րդ լեռներների հրամանատարներները Կերյալիսը, Լեպիտը, Լետերնը և Ֆրիկը, ինչպես և Հրեաստանի նոր նշանակված կուսակալ Մարկանտոն Հուլիոսը:

Զատկական տոնները մոտենում էին: Հրեաները զանազան երկրներից ուխտի էին գնում երուաղեմ տաճարում աղոթելու և զատիկն այստեղ կատարելու համար: Դեռ նոր էին ուխտավորները Երուաղեմ հասել և մեծ բազմությամբ լցվել տաճարն ու քաղաքի փողոցները, երբ հոռմեական լեռները երևացին քաղաքի շրջակայքում ու ծանր շարժվելով սկսեցին պաշարել քաղաքը:

Առաջին հերթին հարձակման ենթարկվեց Պղեփիուա աշտարակը: Հոռմայեցիները երեք օր կատարուտերից ու տարաներից անընդհատ քարկոծում էին աշտարակի հաստ պատերը: Իսկ աշտարակում գտնվողները նետահարում էին հարձակվողներին: Ստկայն, պաշտպանների անձնական քաջությունը Պղեփիուա աշտարակը շիրկեց հոռմայեցիների մեթոդիկ ալերումից և աշտարակը կործանվեց: Պետք է ասել, որ պաշտպանող ջոկատների պարագլուխների մեջ միասնականություն չկար: Թեև մեծ քաջությամբ կը ուրիշ էին հոռմայեցիների դեմ, սակայն միասնականության բացակայությունը թուրացնում էր զոկատների կարգապահությունը: Ահա հենց այդ ժամանակ Պաշտպանության Խորհրդը քաղաքը երեք մասի բաժանեց: Ներքին քաղաքի պաշտպանությունը Խորհրդը հանձնեց Հովհաննես Գիշալացուն, վերին քաղաքինը՝ Սիմոն Բար Գիորային, իսկ Եղիազար թեն Սիմոնը ստանձնեց տաճարի և Անտոնիոսի աշտարակի պաշտպանությունը: Թեև այս բաժանումը կատարվեց, բայց

այնուամենալիք պարագուիսների մեջ կար-  
զապահությունը դարձյալ բացակայում էր:  
Հովհաննեն Գիշալացին, դժգո՞ւ մնալով ն-  
ղիազար թեն Սիմոնի գործելակերպից, Պա-  
սեթի նախօրյակին ներխուժեց տաճառ, ցրեց  
նրա դրած պահակներին ու նղիազարին էլ  
բանտարկեց աշշարակում: Այնուշետև Գի-  
շալացին Սիմոն Բար Զիորային առաջարկեց  
միասին շարունակել քաղաքի պաշտպանու-  
թյունը: Այս երկու անձնավորությունները  
թեև բնավորությամբ ու մտածողությամբ  
միանգամայն տարբեր մարդիկ էին, սակայն  
արտաքին թշնամու դեմ կովում էին համե-  
րաշխ ու այդպես համերաշխ էլ մինչև վերջը  
շարունակեցին դիմագրությունը:

Հովհաննեական իգեռոնները յոթ օր, գիշեր ու  
ցերեկ, կովկելուց հետո մայիսի 30-ին, մեծ  
քանակությամբ սպանվածներ ու վիրավորներ  
տալով, գրավեցին քաղաքի պարիսաներից  
մեկը: Սակայն Հովհաննեական զորքերը հոգնել  
էին և Տիտոսը հրամայեց չորս օրվա զադար  
տալ:

Դագարի այդ օրերին Տիտոսը փորձեց  
հաշտության բանակցություններ վարելով  
վերջ տալ պաշարմանը: Նա իր բանակում  
զոնվող Հովսեփ թեն Մատաթիասին և զորա-  
պետ Պաուլիսին առաջարկեց մոտենալ քա-  
ղաքի պարիսաներին և նրա պաշտպանների  
հետ բանակցություններ վարել: Տիտոսը ա-  
ռաջարկում էր քաղաքը հանձնել իրեն և խո-  
տանում էր խնայել բնակիչների կյանքը ու  
պահպանել տաճարի ինքնավարությունը: Տիտոսի մյուս պայմանն այն էր, որ բերդա-  
պահ զորքն ու նրա պարագուիսները պիտի  
հանձնվեին հաղթողի կամքին:

Երուսաղեմի պաշտպանների կողմից հան-  
դես եկավ բարձրագույն դպրոցի գիտնական  
Ամրասր, որը իր երեխմնի ընկեր Հովսեփին  
հայտնեց քաղաքի պաշտպանների հետեւալ  
առաջարկները.

1. Բերդապահ զորքին, իր պարագուիսնե-  
րով, թողնել ազատ կերպով երուսալեմից  
դուրս գալու և նրանց ճանապարհ տալ զին-  
վորական պատվով:

2. Հովհաննեցիների զորքը երուսաղեմում  
չփափի մնա:

Պաուլիսը, նկարագրելով պաշարվածների  
կրած ու առաջիկայում կրելիք նեղություննե-  
րը, առաջարկում էր վերջ տալ համառությա-  
նը, դադարեցնել արյունահեղությունը և ա-  
վելի համեստ լինել պահանջների մէջ: Այն  
ժամանակ Ամրասր համաձայնելով կատա-  
րել հովմայեցիների պահանջը, իր կողմից էլ  
պահանջեց պաշարվածների ձեռքը հանձնել  
ու Հովսեփի թեն Մատաթիասին, երբեմնի  
առաջին կարգի քահանային, ու Ագրիպա-  
սին, հրեական թագավոր կոչեցալին և ումն

Բերենիկային, հրեական նախկին իշխանու-  
թուն: Հովմեական պատգամավորությունը  
մերժեց բավարարել այս պահանջները և բա-  
նակ վերադարձավ, իսկ հրեական պատգա-  
մավորները կրկին մտան պաշարված քաղա-  
քը:

Արդեն թե քաղաքացիները և թե ուլուտա-  
գորները սկսել էին նեղվել ուսելիքի պակա-  
սությունից: Շատերը, սովոր նեղվելով, փոր-  
ձում էին հեռանալ, պաշարված քաղաքից: Տիտոսը  
սկզբում հեռացողների առաջ ար-  
գելուն չէր հարուցում և նրանց էլ չէր  
պատճում: Բայց երբ հեռացողները սկսեցին  
խմբերով փախչել քաղաքից, Տիտոսի խոր-  
հրդական Տիբերիոս Ալքասանդրը խորհուրդ  
տվեց խստացնել պաշարումը և փախչողնե-  
րին էլ խաչել:

Հովհաննես Գիշալացին և Սիմոն Բար Զիո-  
րան էլ իրենց հերթին նույնպես դաժան դա-  
տաստան էին տեսնում փախչողների հետ:

Պաշարման օրից անցավ յոթը շաբաթ: Պենտեկոստեի տոնն էլ վերջացավ: Հովմայի-  
ցիների բոլոր փորձերը, հարձակմամբ տիրա-  
նալու քաղաքի պարիսաներին, հաջողություն  
շունցան: Քաղաքի պաշտպանները, հաճախ  
քաղաքից դուրս էին գալիս և հակահարձակ-  
մամբ ստիպում հովմայիցիներին հայ քաշ-  
վելու ժամանակավոր այդ հաջողություննե-  
րը որոշ ոգեսրություն էին առաջ բերում պա-  
շարվածների շարքերում և հույս ներշնչում,  
որ եաւին կօգնի ու կազմահի պաշարունա-  
րից: Սակայն, հովմայիցիները կրկին առաջ  
էին շարժվում և կասարություններն ու տա-  
րանները գործի դնելով անդադար հարվա-  
ծում քաղաքի ամուր պարիսաներին:

Անցավ և հովսիս ամիսը, բայց առանց ո-  
րմէ փոփոխության: Պաշարումը շարունակ-  
վում էր. հրեաները պարիսաներից հրկիզող  
նյութեր թափելով այրում էին մեքենաները  
և հաջող նետաձգությամբ ու քաջությամբ  
դիմադրում պաշարուներին:

Վերջապես, մեծ զոհերի գնով, հովմայից  
իներին հաջողվեց տիրանալ Անառնիոսի  
աշտարակին և վրանգի տակ գնել տաճարը:

Բայց պաշարվածները աննկուն կերպով  
շարունակում էին մեծ քաջությամբ ու համա-  
ռությամբ պաշտպաննել քաղաքը:

Տիտոսը այլ հար շգտնելով հրամայեց  
քաղաքի շուրջը յոթը կիլոմետր երկարու-  
թյամբ պարիսպ քաշել, որպեսզի պաշար-  
վածները քաղաքից դուրս գալու և փախչե-  
լու հնարավորությունից միանգամայն զըրկ-  
վին:

Սովոր օրեցօր սաստկանում էր, պաշար-  
վածները ուսելիք էին ինտոռունեխմագ աղ-  
բանոցներում: Սովոր ուժապառ եղածները  
տանիքներում ընկած և իրենց հայացքները

դեպի հաճվեի տուն-տաճարի կողմը ուղղած սպասում էին նրա դալստյանն ու իրենց փըրկությանը:

Տիտոսի Հրամանով քաղաքի շուրջը, ճանապարհների եղերքներին խաչեր էին կանգնեցվել և փախչողներին խաշում էին: Երուսաղեմի շուրջը գտնվող գեղեցիկ պարտեզների ձիթենիները, ծառերը հոռամայեցիները կտրատել ու խաչեր էին շինել: Երիքով տանող ճանապարհը լցված էր խաշվածներով: Ոչ ոք չէր մտածում խաչերի վրայից իշեցնել խաշվածներին ու թաղել և ամբողջ օդը ապահովել, լցվել էր գարշահոտությամբ: Դիակների գարշահոտությունը գրգուել էր գաղանակութագրը: Մեծ խմբերով այստեղ էին հավաքվել կիբանանի անտառներից գալիք, շնագալլեր, աղվեսներ, Հորդանանի շրջանից, առյուծներ, Գիլեատից և Բասանից՝ հովաներ, որոնք գիշերները ոռնոցով հոշոտում էին խաշվածների գիտեները:

Քաղաքի շուրջը գաղաներն էին վխտում, իսկ քաղաքում մեռելային լուսթյուն էր տիրում, զորամասերից բացի ոչ անց ուղարձ չէր անում, մարդկի կարծես կորցրել էին նույնիսկ խոսելու, ծայն հանելու ընդունակությունը. տների կտուրների վրա, փողոցներում ընկած էին սովալլով ու հյուծված մարդիկ, որոնք ուղած մարմիններով ու լայն բացված բերաններով մաշվան էին սպասում: Սակայն սոսկալի այդ սովն անդամ չէր հոսահատեցնում քաղաքի պաշտպաններին և որքան սովը սաստկանում էր, պաշարվածների համառությունն այնքան ավելի ուժեղանում էր:

Տաճարի քահանաները, որոնք անխափան կերպով շարունակում էին տաճարում կատարել կենդանիների՝ զոհաբերությունը, օգոստոսի 5-ին նույնպես պատրաստվում էին զոհաբերել մնացած 9 գառներից երկուոր, երբ Հովհաննես Գիշալացին և Սիմոն Բար Զիորան տաճար մտնելով խեցին բոլոր գառները, հացը, գինին և մերջ տվին զոհաբերության:

Հովհաննեսի և Սիմոնի զինվորները, ուստիք որոնելու պատրվակով, խուզարկեցին տաճարի բոլոր բաժանմումները և մտան մինչև իսկ Սրբության Սրբոց բաժանմումքը, որտեղ տարին մի անգամ մուտք էր գործում միայն քահանայապետը: Սա արդեն վերջին սրբապղծությունն էր:

Անսոնիոսի աշտարակի գրավմամբ հոռամայեցիները գրավել էին նաև գեպի տաճար տանող ճանապարհը. այլևս տաճարը պաշտպանող ամրություն գոյություն չուներ և մոտ էր նրա անկման սրճասական ժամը: Տիտոսը մի վերջին փորձ ևս արեց, որպեսզի տաճարն

առանց ավերման իրեն հանձնեն. Հովհաննեսի Մատաթիասին նա կրկին անգամ ուղարկեց հրեաների մոտ, առաջարկելով զենքերը վար դնել ու հանձնվել: Սակայն, պաշտպանելով լուս լսեցին Հովհաննեսի կրակոտ ու համոզիչ խոսքերը և ապա պարսպի զըռնակը բանալով նրա վրա բաց թողին մի քանի լսողությունը: Դա ամենածանր վիրավորանքն էր, որ հրեաները հասցնում էին իրենց երեմնի առաջին կարգի քահանային:

Անցավ ևս երեք շաբաթ և սկսվեց վճռական ու կատարի հարձակումը: Հովհաննեսի զինվորները, կատարած հրեաների համար դիմադրությունից, մեծ ուժերով հարձակվեցին տաճարի վրա: Նրանք այլեցին տաճարի շուրջը գտնված շենքերը և կոտորեցին քահանաներին ու տաճարում աղոթք անողներին. ապա նրանք հրդեցին տաճարի փայտանոցը, որից էլ բռնկվեց նաև տաճարի շինքը: Հովհաննեսի առաջարի կտրին կանոնած, տաճարի բանալիները ձեռքները բռնած դեռ մի քանիները նահանի օգնությանն էին սպասում: Հովհաննեսի զինվորները սրանց նետաձգությամբ սպանեցին: Հովհաննեսի ընդդրկել էր ամբողջ տաճարը, երբ զինվորները այնտեղից դուրս բերին մագաղաթների վրա գրված Սուրբ Գիրքը, ուկյա աշտանակները, սեղանները և այն ամենը, ինչ իրենց կարծիքով արժեքավոր էր, իսկ Ուստի Տապանակը մնաց այրված տաճարի փլատակների տակ:

Տիտոսը թեև հրամայել էր հրդեհը մարել և կողոպուտը դադարեցնել, սակայն դադարած զինվորները այլևս ու մի հրամանի շին հնարկվում: Նրանք մտադրվել էին իրենց թըշնամի համար նահանի վերջնականապես ոչչացնել ու մոխրակուլտի վերածել:

Դա տեղի ունեցավ Աբայի 9-րդ օրը 3830 թվին, բայց հրեական թվականի, կամ եգուսոսի 29-ին 70 թվականին Քրիստոսից հետո:

Կործանված տաճարը այսպիսով գոյություն ունեցավ ընդմենք 629 տարի և 47 օր:

Վերջացնելով քաղաքի հյուսիսային մասի ու տաճարի գրավումը և շարունակելով հրեաների անխնա կոտորածը, Տիտոսը այնուհետև, կատարի մարտերից հետո, գրավեց Ճիպիտ, Ֆաղայիլ և Մարիամնա աշտարակները, որոնց հաստ ու ամրակուռ պարիսպները դեռ գիմադրության հույս էին ներշնչում նըրանց վերջին պաշտպաններին:

Սեպտեմբերի 8-ին այդ աշտարակներն էլ կործանվեցին և նրա պաշտպանները, Հովհաննես Գիշալացու և Սիմոն Բար Զիորայի հետ միասին, անձնատուր եղան:

Մարտերը վերջացան: Քաղաքի ավերված փողոցներն ու տները լիբն էին անթաղ ու

նեխվող դիակիներով։ Հոռմայեցի զինվորները կործաննեցին ու ալբերին բոլոր լավագույն շնչքերն ու տները։ Հզի ճարակ դարձան նաև Հերովդեսի ու Մակաբայեցիների պալատները։ Քաղաքի ավերման դործին, հոռմեական լեզեռների հետ համահավասար, մասնակցեցին նաև Ազգիպատ Ա Հրեա, թագավորի ձիավորները։

Եվ Հերովդես Մեծի օրոք վերակառուցված երուսաղեմը, իր սպիտակ ֆարով զարդարված պալատներով ու տներով, հինգ ամսվա ընթացքում ավերակների կույտի վերածվեց։

Եվ իրականացավ Քրիստոսի մարզարեությունը։

«Երուսաղեմ», Երուսաղեմ, որ մարգարեներ էիր կոտորում և քեզ մոռ ուղարկվածներին քարկոծում, քանից անգամ կամեցաք մանուկներին հավաքել, ինչպես թիսկանն է յուր ծագերին թերի տակ հավաքում, բայց դուք ծագերին թերի տակ հավաքում, բայց դուք շկամեցաք։ Ահա ձեր տունը ձեզ ավերակ մնա» (Մատթ. հգ, 37—38)։

VIII ՏԻՏՈՍԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ՀՈՌՈՄ.  
ՀԵՅԱՆԵՐԻ ԱՊԱԳԱ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄՐԱԿԻՐԸ

Երուսաղեմն ավերված ու տաճարը կործանված էր։ Կենդանի մնացած հրեաները, թվով 700 հոգի, շղթայակապ գերի քշվեցին, որոնց թվում նաև Հովհաննես Գիշալացին ու Սիմոն Բար Զիորան։ Այդ գերիները պետք է շքեղացնեին Տիտոսի հաղթական մուտքը Հոռմ։

Ապահովության համար Պաղեստինի կիսաքանդ քաղաքներում պահակազորքեր թողնելուց և իր վերջին կարգադրությունները անելուց հետո Տիտոսը մնացորդ բանկով ճանապարհվեց գեպի Հոռմ, որն արդեն գիտակ էր Երուսաղեմի վերջին անցքերին և պատրաստվում էր փառավոր ընդունելություն ցույց տալ Վեսպասիանոսի որդուն։

Տիտոսը մտավ Հոռմի գլխավոր՝ Աքիայի պողոտան։ Նա առաջ էր ընթանում նստած փառավոր զարդարված ձիու վրա։ Նրան շըրշապատել էր իր լեզեռների հրամանատարներից կազմված շքախումբը, իսկ հետեւ էլ Համբաքայլ շարժվում էին գերիները։ Հովհաննես Գիշալացու և Սիմոն Բար Զիորայի գլխավորությամբ։ Ապա սրանց հետեւ տանում էին ռազմական ավարը— տաճարի ուկեպատ սեղանը, ոսկե աշտարակները, ծիրանագույն վարագույրը, Մովկեսի օրենքները մագաղաթի վրա գրված և այլ թանկագին շատ իրեր ու զգեստներ, որ հաղթողը գրավիլ էր Հրեաստանում։

Վեսպասիանոս կայսրը մեծ զոհումակությամբ ընդունեց իր որդուն և հրամայից կը-

տրել երկու տեսակի դրամ— «Հրեաստանը պարտված» և «Հրեաստանը գրավված» մակագրությամբ։ Այդ դրամների վրա հրեաները նկարված էին շղթայակապ նստած արմավինիների տակ, իրենց սրբության կորուստը ողբավիս...

Երուսաղեմի ու տաճարի կործանումը ճրնշող տպավորություն գործեց հրեաների վրա թի' Պաղեստինում և թե՛ հայրենի երկրից դուրս։

Հոռմայեցիներից ազատագրմելու և ինքնուրույն պիտություն ստեղծելու հույսը վերշնականագեց կորցրին հրեաները։ Այդ պատճառով էլ, պատերազմական գործողությունները դադարելուց հետո, շատ հրեաներ թողին իրենց հայրենիքը և գաղթեցին ավելի ապահով երկրներ—Հունաստան, Ալեքսանդրիա, Հոռմ ու Խաղանիա։ Պաղեստինը համարյա դատարկվեց հրեաներից և նրանց տեղը գրավեցին արաբները։

Հուահատական դրության այդ ժամանակներին էր, որ Երուսաղեմի Գերագույն Հոգմոր հորհրդի անդամ և զատավոր Հովհաննան թեն Զաքենոսը 70 թվականին Գալիլիայի եաբնե քաղաքում իր մոռ հավաքեց Խորհրդի կենդանի մնացած 70 գիտնականներին և առաց նրանց։

Մինչև այսօր Աստծու խոսքի և օրենքների իմաստի բացատրողը, ժամանակի խրնդի որոշողը, թե երբ է տարին սկսվում, երբ է լուսնի ծննդելու ու լրումը, ապա բարոյական կյանքի ուղեցույց եղողը, ով է արդարն ու մեղագորը, եղել է Երուսաղեմի Գերագույն Հոգմոր Խորհրդուրը։ Այսօրվանից այդ իրավունքը և պատահանությունը անցնում է մեզ, մեր նաբնեի Խորհրդին։ Կործանված տաճարի և պետական փոխարեն մենք հրեա ժողովրդին կտանք Սուրբ Գիրքը։

Տեսնելի Աստծու փոխարեն մենք կըստեղծենք անտեսանելի Աստուած։

Ո՞րն է կենդանի Աստծու շոնչը—ուսմոնքն ու օրենքը։ Մեր առաջ այժմ դրված է իմնիդր, լրիկ կերպով և հարազատորեն որոշել ո՞րն է Սուրբ Գրքի գրվածքներից իսկականը և ո՞րն է օտարամուտը։

Երկրորդ՝ պետք է վավերացնենք երկարտարիների ընթացքում մեր գիտնականների տված բացատրությունները։

Երրորդ՝ պետք է գրենք մագաղաթի վրա 613 պատվիրանները, որ մենք ստացել ենք մեր հայրերից, ցույց տալով սկիզբն ու վերջը և դաշնությունները։

Խսրայելք սրանից հետո պետք է հետևի միմիայն մեր որոշած ծեսերին ու արարողություններին, որովհետեւ միայն մենք 71 հրդին ենք մեացել նախվեից։

Մաքրենք մեր սրտերը և անցնենք աշխատանքի և հավատացած եմ, որ մենք ավելի կայուն կլինենք, քան Հոռոմը:

Բոլորն ասացին.

— Ամեն:

Եվ ամբողջ գիշերը 71 գիտնական ռաբբիները աշխատեցին Սուրբ Գրքի կարգավորման վրա: Նրանք 24 գիրք ընդունեցին որպես իսկական, հարազատ, իսկ 14-ը, որպես ռտարամուտ, անվավեր ճանաչեցին:

Նոքա, այդ խաղաղասեր, խոհում, հեռատես ու իմաստուն գիտնական ռաբբիները, ապագայում գալիք փորձությունները նկատի ունենալով ճշտեցին ու հաստատեցին Սուրբ Գրքի իսկական բնագիրը, օրենքներն ու բացարությունները (թալմուտը):

Եաքնեի Խորհրդի այդ որոշումը հրեա ժողովրդի համար դարձավ պարտադիր և նա մինչև այժմ էլ խիստ հետեւող մնաց այդ օրենքներին ու բացարություններին, անխափան կատարելով բոլոր ծեսերն ու արարողությունները:

Չնայած իր հայրենիքը կորցրած հրեա ժողովուրդը ցրվեց աշխարհի բոլոր կողմերը և այդ նոր բնակավայրերից շատերում մոռացավ նույնիսկ իր մայրենի լեզուն, բայց նա շմոռացավ անաղարտությամբ պահպանել

մովսիսական ծիսապաշտությունն ու հայրենի ավանդությունները:

Եաքնեի Խորհրդի տված որոշումները ավելի հաստատուն հանդիսացան քան աշխարհակալ Հոռոմի գերիշխանությունը: Հրեա ժողովուրդը աշխարհաբաղաքացի դառնալով ամեն աեղ, ուր բնակություն հաստատեց, շինեց և իր հավատացյալների ժողովարանը (սինագոգ), որտեղ հավատացյալները թալասով\* ծածկված աղոթում են Աստծուն:

Սակայն, չերմեռանդ հրեաների համար Երուսաղեմի և կործանված տաճարի տեղը մնացին ամենանվիրական սրբավայրերը: Ուստավորները միշտ այցելում են այդ վայրերը և Երուսաղեմի կիսագանդ պարսպի տակ նստելով ու ամբողջ մարմնով օրորվելով ողբում խոստացչալ երկրի կորուստը, տաճարի կործանումը ու հրեա ժողովրդի վրարանդի դառնալը:

Բայց հրեա ժողովուրդը միշտ էլ համոզված է եղել, որ պիտի գա այն օրը, երբ իսրայելացիք հաղթանակով կրկին կվերադառնան իրենց հայրենիքը, կվերականգնեն Երուսաղեմն ու Հրեաստանը և Երուսաղեմում իրենց Աստուծու՝ Եահվեի համար կկառուցեն նոր տաճար:

\* ) Սպիտակ ժածկոց ոսերին գցելու համար:

